ՎԻԹԽԱՐԻ ԸՆԿՈՒԶԵՆԻՆ

Ս. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ

I

Ամառն էր։ Կիզիչ արևը շիկացած ճառագայթները գցել էր ամայի դաշտի վերայ. հուրհրատուում, պլպլում էր մոխրագոյն դաշտը, կարծես մի թեժ թորոն. լռութիւնը մեռելային էր, ոչ մի կենդանի շունչ չէր համարձակւում դուրս գալ իւր բնից, իւր սորամուից. նրանք ծածկւել, թագնւել էին, միայն ճանապարհորդներն էին, որ բնոնաւորւած ձիաներով շտապում էին. բայց ո՞ւր են շտապում, չէ որ բաւականին տարածւած է այդ ամայի դաշտը, ինչո՞ւ են չարչարում իրանց կենդանիներին, որոնք քափ ու քրտինքի մէջ կորած, հազիւ հազ հեւալով քայլերը փոխում էին։ Ճանապարհորդները ճիշդ է այրւած, խանձւած էին, բերանները աղանձւած, բայց նրանց երեսներին նայողը կասէր՝ «արանք շատ մօտ են այն ժամին, երբ պիտի աղատւեն արևից»։ Եւ յիրաւի անցաւ մի փոքր միջոց, քարաւանի գլխաւորը, որ մի բարձրահասակ, խոժորադէմ, չոր-չոր տղամարդ էր նժոյգի վերայ նստած՝ դարձաւ ուրախ-ուրախ ընկերներին աղանձւած բերանով. «Ա՛յ, ա՛յ, ժեր ազատարար ընկուզենին, լաւ նայեցէք այն փոքրիկ կանաչ կէտն է. ի՞նչ փոքր է երևում, հիմայ ի՞նչպէս հով կը լինի նորա տակը. օրհնւի քո տնկողի գերեզմանը. դէ՛ մի մի բերան օրհնանք էլ դուք տւէք, ոտ վերցրէք, շուտով հասնենք, արևից ազատւենք, դէ ձեզ տեսնեմ»։

Ճանապարհորդները միաբերան, քաջալերւած «օրհնւի քո տնկողի գերեզմանը» ասելով, ձիաներին մտրակեցին, որ որքան կարելի է շուտով հասնեն իրանց վրկարար ընկուզենուն։

«Բա հազիւ հազ հասանք, ուխա՛յ մի քիչ որ հովացանք» այս ու այն կողմից ասացին ճանապարհորդները և ընկուզենու տակ տեղաւորուեցան։

Ամբողջ դաշտի վրայ ոչ մի կանաչ չէր երևում, բացի այդ հաստաբուն, ստուերաշատ, ոստերը հեռու տարածած ընկուզենին. այդ չոր ամայի դաշտում միակ աչքի բերկրութիւն տուողը, միակ պատսպարողը դա էր համարւում։

Արևը ամենաբարձր կէտումն էր կանգնած. ընկուզենու շուքը չորս բոլորը տարածուած, մի կանոնաւոր հիանալի շրջան էր կազմել։ Ոչ ոք չէր ուզում շրջանից դուրս գալ, չորս շուրջը կորած հանգրստանում էին։

—Ինչպէս երևում է ճաշելու ախորժակ չունէք. ծառաները ոչինչ պատրաստութիւն չեն տեսնում, ասաց գլխաւորը, որ թիկն էր տուել մեծ բաւականութեամբ հաստաբուն ընկուզենուն։

—Փայտ չի ճաբուում, տղայ, գարձան միաբերան ծառաները։

—Փա՛յտ... հա, ճիշդ է, փայտ չը կայ. բայց կացէք, աչքը գցելով ընկուզենու բունին, այ ձեզ փայտ, ընկուզենու այս փոքրիկ խոռոչը տեսնում էք, հանեցէք դաշոյններդ, էլ այն տեղը չի, սովից կը կոտրուենք, նորա փտած տեղերը կորատեցէք. այդտեղ մի շալակ փայտից աւել կը լինի. դէ՛ մենք քնում ենք, կրակ արէք, և, երբ խորովածը պատրաստ կը լինի, մեզ վերկացրէք։

Ծառաները ոչինչ չը կարողացան ասել. միայն նրանց երեսկահատը լուռ ու մունջ կարծես արտայայտում էր. «ինչպէս սուր բարձրացնենք այն բարերարի դէմ, որ միշտ մեր պատսպարանն է հանդիսանում, չէ որ նա շուտով կը չորանայ և մենք կը զրկուենք մեր այդ ազատարար ծառից»։

Քնեցին տէրերը, պատրաստութեան յետևից ընկան ծառաները։

Հինաւուրց ընկուզենին տեսաւ թէ ինչպէս ծառաները մերկ դաշոյնները ձեռներին իւր վրայ յարձակուեցան, իբր թշնամու վրայ, և սկսեցին փոքրիկ խոռոչը մեծացնել՝ կեռ փայտը կորատելով. տեսաւ նոյնպէս թէ ինչպէս նրանք սկզբում չուզենալով մօտեցան, բայց յետոյ, աղանների հրամանի ազդեցութեան տակ, մուտացան այդ, դուցէ

և խորովածի համար գրգռուած ախորժակն էլ պակաս դեր չը խաղաց այդ գործում։ Այո՛, նա տեսաւ այդ բոլորը, սրտումը մի սուր ցաւ զգաց և այդ ցաւը ճղնէ ճիւղ տարածուեց ամենայն տեղ. Նորա տխուր կերպարանքը, յուսահատ աչքերը ասացին. «Մի՞թէ ես այնքան անպէտք եմ դարձել, որ մարդիկ այսպէս ինձ կտրատում են. եթէ չիրաւի ես ոչ մի օգուտ չեմ տալիս, միայն իմ կանաչ ստուերիս և գագաթիս եմ զոռ տալիս աւելի ու աւելի տարածել և բարձրացնել, թո՛ղ աւելի լաւ է ինձ տակից կտրեն կամ թէ չէ՝ որպէս զի բոլորովին ոչ մի հետք չը մնայ՝ արմատահան անեն. բայց ահա իմ սաւերում անուշ անուշ քնած են մարդիկ, ես տեսայ թէ ինչպէս ինձ տեսնելով շտապեցին, որ արևից ազատուեն. կը նշանակի ես օգուտ եմ տալիս, հապա ինչո՞ւ են անխնայ ինձ կտրատում, սիրտս վիրաւորում, արիւնլուայ անում»։ Կանգ առաւ ընկուզենին և սկսեց մտածել։

«Հա՛ դայայ, շարունակեց նա, խեղճ մարդիկ փայտ չեն ճարում այս ամայի դաշտում, իսկ նրանց հարկաւոր է փայտ կերակրի համար. թո՛ղ լաւ է ես մի քիչ չարչարուեմ տանջուեմ, միայն թէ մարդիկ սովից չը մեռնեն»։

Վերջին միտքը մոռանալ տուեց ընկուզենու սրտի կսկիծն ու ցաւը։

Կրակը վռթվռթում էր բունին մօտիկ. կապոյտ ծուխը, առանց դէս դէն տատանուելու, ուղղակի բարձրանում էր և, ոստերին կպչելով, տարածւում ճղների մէջ. ապա, բարձրում միախառնուելով, քուլայ քուլայ վեր բարձրանում։ Թեժ կրակը մի կողմը քաշած՝ խորոված էին անում, իսկ միւս կողմից թափթփած փայտերն էին իրարից կպչելով վառւում։

«Պատրաստ է խորովածը», ձայն տուին ծառաները։

Խորոված լսելով ճլըմկտալով, յօրանջելով վեր կացան քնատեղերից տէրերը»։

— Ինչ լաւ կը լինէր, այս ընկուզենու ոստերը շատ հեռու տարածուէին, որ մեր ամբողջ քարւանը սրա տակը տեղաւորուէր. տեսնում էք ձիաները դուրսն են մնացել. մի բանի պէտք չէ հա, թէև հեռուից միշտ սապտապում ենք շուտով հասնել, աչքերը տրորելով ասաց ճանապարհորդներից մէկը։

—Բայց որ տերևները խիտ լինէին, աւելի լաւ կը լինէր, երբեմն քնած տեղը արևի ճառագայթները մարդու աչքերին են ընկնում, քնահար անում, աւելացրեց մի ուրիշը։

—Ա՜խ, ինչ ասեմ սրա յիմար տնկողին, վրայ բերեց գլխաւորը, ասա՛ մարդ Աստուծոյ, տնկում ես տնկում, աղբրի մօտ տնկէիր էլի, որ ծարաւելիս մէկ էլ այրւելով, խաշւելով չը գնայինք աղբրի մօտ ջուր խմելու։ Սա ղորդ որ մի բանի պէտք չի, ոչ մի յարմարութիւն չունի։

Սուփրան բաց արած էր, հացերը շարած, պանիրն ու գինին մէջ տեղ դրած. մեծ ախորժակով հացի նստեցին. խորոված էր որ, ծըլծըլալի, իւղը կաթկթելով փռած լաւաշների վրայ, վեր էր քաշւում, բայց մի րոպէում տեղը դատարկւում. կուլայի տակը տափը չէր տեսնում, համեցէք էր, որ անում էին ճանապարհորդները իրանց պատւելի գլխաւորին։ Խորոված ու գինի,—շատ դուրեկան է միմեանց հետ. քարաւանի գլխաւորի գլուխը տաքացած էր, երբ հացից վեր կացան։

—Պատրաստւում էք ճանապարհւելու, դարձաւ գլխաւորը իւր ճանապարհորդակիցներին կարմրած աչքերով, հա լաւ ժամանակն է, հովն ընկել է, ինչ լաւ կրակ կայ. կրակը որ տեսնում եմ, ախորժակս կարծես կրկին բացւում է. կրա՛կ, հրդեհ՜ ես շատ եմ սիրում, այժմ ուզում եմ բո՛ց, բո՛ց տեսնել և զւարճանալ։ Ծառաներ, այն վառւած, մեծ մեծ խանձողները փղակի մէջ դրէք։

—Բայց ափսոս... ձայները փորները գցած շշնջացին ծառաները։

—Ոչ մի ձայն, լսում էք, թէ չէ ձեզ էլ հետը ներս կը խոթեմ։

Ափսոս է՛, ինչ ափսոս, չէք տեսնում հով է, էլ ինչ հարկաւոր է, թուլամո՛րթ կինարմատներ։

—Այո, այո, ոչ մի բանի պէտք չէ, հով է, աւելի լաւ է տեսնենք ինչպէս է վառւում այս անպէտք, կանաչ ծառը, այս ու այն կողմից վրայ բերին ճանապարհորդները։

Ծառաները բարձում էին ձիաները, իսկ տէրերը մեծ հրճւանքով մտիկ էին տալիս թէ ինչպէս մխում, թշթշում է կիճ փայտը։

—Է՛, թշթշոցը չի կորելու, ինչ է զզւացնում, գլուխներս տա-

նում, ինչու չէ բոց դուրս գալիս, բո՛ց, բո՛ց, հասկանում էք, կրակը թեժացրէք շուտով, գոռաց գլխաւորը ծառաների վրայ։

—Նատ ուշ կը քաշի, երկու օրուայ մէջ հազիւ հաղ այրի, աւելի լաւ է գնանք, ժամանակն անցնում է, ասացին միաբերան ճանապարհորդակիցները գլխաւորին։

—Այո, այո, գնանք, բայց ափսոս որ չը տեսանք, թէ ինչպէս դրը՛խկ՝ պիտի ընկնի այդ վիթխարի անպէտք ծառը։ Անպէտք է, գիտէք, այդ չը լինէր, գոնէ մէկ պարապ-սարապ մարդ, մի ուրիշը աղբրի մօտ կը տնկէր, ասաց ու ձին հեծաւ։

«Վա՛յ, վա՛յ, այրւում եմ... կարծես նոր զգացած յուսահատ ճչաց ընկուզինին, օգնութի՛ւն, օգնութի՛ւն հասէք մարդիկ, ես էլի պէտք եմ ձեզ, չէ որ կրկին ճանապարհորդելու էք, չէ որ դարձեալ տովումս էք լինելու... օգնութիւն, աղաչում եմ, սիրտս այրւում է... ջո՛ւր... ջո՛ւր... ջուր հասցրէք պաղատում եմ։ բայց նրանք չեն լսում, գնում են... գնացին... քարւանի տուտը կորւեց... ուհ անգութ արարածներ, այդ էի ձեզնից սպասում, բաւական չէր ինձ վիրաւորեցիք ձեր փորի համար, այժմ էլ ինձ կրակում էք... անխիղճ մարդիկ, բարութիւնը չարութեամբ էք փոխարինում, Ասուած կայ վերևում, նա տեսնում է ձեր արարքը, գոնէ նրանից վախեցէք։ Բայց իմ ձայնը խանձւած է, էլ չի հասնում նրանց, տե՛ս, տե՛ս, մինչև անգամ նրանք յետ էլ չեն նայում, ո՛ւհ անիրաւներ։ Որդիքս, որդիքս լինին ազատւած, բայց նոքա տհաս են... նրանք կայրւեն, վեր կը թափւեն, կը չքանան աշխարհի երեսից... մենք միասին ճնաս բարև կասենք այս աշխարհին... բայց ես դեռ չեմ ուզում մեռնել, հասունացած որդիներիս աչքովս տեսնեմ և յետոյ մեռնեմ...

Այսպէս ընկուզենին յուսահատ ճչում, ծւում էր, մորմոքւած լաց լինում, երբ ստորին ոստերի տերևներն ու կաղաղները թառամել սկսան, կուչ եկան։

«Օգնութիւն, միանգամից սուր ձայնով ճչացին սրանք, այրւում ենք, օգնութիւն. մայրիկ, ազատիր այս հնոցից, ահա քիչ է մնացել այրւած վեր թափւենք շուտով... ջո՛ւր... մի գդալ ջո՛ւր... սիրտներս կրակ ընկաւ... ո՛հ, այս ինչ պատիժ է...

—Ինչ էք ականջնդրս տանում, արհամարանքով կորեցին նրանց խօսքը միջին ոստերի կաղաղները, ինչ կայ որ, օգնութի՛ւն, չէ մինչ մեկի բանը կորել է ձեզ օգնութեան գալ. այսպէս լաւ է, այրեցէք, կոտորեցէք, տեղն է, ձեզ համար ապրելը չեմ իմանում ինչ արժէք ունի այդտեղ գետնին մօտիկ. աղքատ էք. աղքատին ո՞վ օգնութիւն կը հասցնի, առանց այն էլ դուք մեռած էք, լաւ չի՞ միանգամից հէնց ձեռք քաշէք այս աշխարհից. մեր փառքը դուք նսեմացնում էք, մեր սնունդը ի զուր տեղը կլանում, մեռէք թըշուառներ, չը համարձակուէք էլ օգնութիւն կանչել։

Ուիա՛, ինչ լաւ է, մենք տաքանում ենք, երևի մեր հասնելու ժամանակը եկել է։

—Օգնեցէ՛ք, Աստուծու սիրուն, ձայն տուաւ դարձեալ ընկուզինին։

—Այս մեր մօր ձայնն է, կարծես նոր լսելով դարձան միմեանց, մէջ տեղի ոստերի կաղաղները, այո՛, այո՛, նրա ձայնն է, նա էլ այրւում է, բայց մեզ ինչ, այսպէս մեզ համար լաւ է, մենք հասնում ենք, էլ ինչ կարիք ունինք մօր. այսօր անպատճառ կը հասնենք, եթէ այսպէս շարունակի։ Բայց այս ինչ է, վա՛յ մենք էլ այրւում ենք, օգնութի՛ւն... մայրի՛կ, մեռանք, ջուր հասցրէք... տապակուեցանք, խորովուեցանք... վա՛յ այս թոպէին վեր կը թափուենք...

—Անամօթնե՛ր, ինչ էք երեխայի պէս լաց լինում, օգնութի՛ւն, օգնութի՛ւն բզաւում, յանդիմանեցին բարձր ոստերի կաղաղները, ձայներդ կտրեցէք և լուռ ու մունջ մեռէք, ում հոգսն է կորել, ձեզ օգնութիւն գալ, դէ՛ պապանձուեցէք պապանձելու նման. մեզ համար այդ շատ լաւ է, ձեր բաժինն էլ մենք կը վայելենք, լայն ու արձակ կը լինի մեր տեղը, առատ՝ մեր բաժինը, մեզնից օգնութիւն մի՛ սպասէք, և վերջապէս ինչ կը սազի մեզ հարուստներիս, մեծերիս, մեր դիրքից իջնել և ձեզ պէս ստորներին, աղքատներին օգնութիւն հասցել։

Ընկուզենին շարունակում էր իւր մորմոքւած սրտի ազեկտոր յառաչանքները. իւր քիչ հասած, մեծ-մեծ որդիներն էլ լսեցին նրա յուսահատ ձայնը, բայց նրանք էլ երկրորդների պէս արհամարեցին ասելով. «Այսպէս լաւ է մեզ համար, մենք շուտով կը հասնենք»... բայց երբ կրակը աւելի ու աւելի բորբոքւեց, թեժացաւ, նրանք էլ նոյն վիճակի ենթարկուեցան, ինչ որ իրանց եղբայրակից-

ները։ Նրանք էլ օգնութիւն կանչեցին, լաց եղան, ջուր խնդրեցին, մայրիկ կանչեցին, բայց ոչոք չը լսեց, որովհետև ընկուզենին էլ չէր զգում, նորա ջուրը քաշել, տերևները դեղնել, թոռել էին և ընկոյզները խանձած, կուչ եկած վեր էին թափթափւում։

Անցաւ մի փոքր ժամանակ էլ և վիթխարի ընկուզենին իւր մարած աչքերը դէս դէն ամայի դաշտի չորս կողմը դարձնելով, մարդկանց արարքը մոաբերեց և առանց նզովելու նրանց՝ վերջին յառաչանքը—թշշոցը—թոյլ կերպով արձակեց և ճարճատելով, կայծեր հանելով գետինը փուեց։ Ծուխն ու փոշին միախառնելով կարծես շիրիմ ծածկեցին հսկայ դիակը, որը վրովլուում էր և գալարուն բոց արձակում...

II

Գարուն էր։ Ամայի դաշտը կանաչ էր հագնուել, զոյնզգոյն ծաղիկներով ներկուել, զարդարուել։ Մեռելային լռութիւնը չքացել, անհետացել էր. երգեցիկ թռչնակների անուշ դայլայլիկը, ժրաջան մեղուների տզտզոցը, գարնան մեղմ սիրքը, որ նոր բացուած ծաղիկների գլխիկներն էր քնքոյշ սատանում, միախառնելով կարծես ներդաշնակ ձոն էին մատուցանում կենսատուային։ Ահա բարձրահասակ, յազթանդամ, բնութեան որդի՝ բարի հովիւն էլ իւր սիրուն հօտը առաջն արած՝ ոգևորելով իւր սրնգի ձայնը բարձրացրեց, սրտի խորքից դուրս եկած անմեղ տաղով ձայնակցեց բնութեան երգիչներին։ Կէսօրւայ մօտ էր. ոչխարները մշմշալի արածելով առաջ էին գնում, իսկ հովիւը յափշտակուած, վերացած բնութիւնով իւր սրինգն էր ածում։ Ո՞ւր էին դիմում ոչխարները. ինչո՞ւ էր ուրախ հովիւը. չը լինի՞ նոքա կէսօրւայ ժամին գէպի մի հով տեղ հանգստանալու էին գնում— Այո՛, նրանք դէպի ընկուզենին, դէպի իրանց սիրելի ընկուզենին էին շտապում։

«Ուր է ընկուզենին, չի երևում, չը լինի միւս կողմն եմ թողել, ասաց հովիւը և ետաց տեղը կանգնած. չէ՛, այստեղից երևում էր ամեն անգամ, երբ հօտը առաջս արած կէսօրւայ ժամին մագաղելու էի տանում. բայց ո՞ւր է, չկայ, ահա ոչխարներս էլ իրանց ուղղութիւնը փոխեցին, չէ, ինչ եմ ասում, հէնց այս է ճանապարհը որ կայ— և ոչխարներին առաջնայ ուղղութիւնը տալով առաջ գնաց։

Հովիւը աչքերին չը հաւատաց, երբ վիթխարի ընկուզենին տեսաւ այրուած, խանձուղ կտրած, բայց երբ լաւ զննեց, իւր մանկութիւնից ի վեր ծանօթ ընկուզենուն ճանաչեց, արտասուքը այլ ևս չը կարողացաւ պահել, լացեց, շատ լացեց և տխուր տրտում կոճղի վրայ նստելով իւր սրտի թախծութիւնը երգեց։ Ի՞նչ էր նորա տխուր երգի բովանդակութիւնը. արդեօ՞ք միայն ընկուզենու կեանքից զրկելն էր լացնում դառնապէս, թէ՞ նորա այնից զրկողին էր անիծում զայրացած.—այո՛, նորա երգը սրտի զայրոյթն էր թախծութեամբ համակուած, երբ երգելիս աղի արտասուք էր թափում, սրտի խորքից էլ կարծես շանթ ու կայծակ էր ցայտում։

«Աստ՛, աստ՛, դու իմ սիրելի ընկուզենի, վերջապէս սրինգը ցած դրեց հովիւը, ո՞վ էր այն անգութը, որ քեզ այդ օրին գցեց. երկնքի պատիժն է՞ր, որ քո գլխին պիտի կատարուէր, թէ՞ անգութ մարդը քեզ կրակեց. աստ՛, պազատում եմ, վրէ՛ժ, արդար վրէ՛ժ է ուզում քո ընկեր բարեկամը. բայց աւա՛ղ դու մեռած ես, ինձ պատասխանող չկայ, ես կը հալւեմ կը մաշւեմ առանց վրէժի... Աստուա՛ծ, ընկուզենուն ստեղծող դու Աստուած, դու, դու պատասխանիր թշուառիս, առանց վրէժի իմ կեանքը այս աշխարհում անտանելի կը լինի, բայց դու էլ չես ուզում պատասխանել, ինձ ուզում էք չարչարել, տանջել»...

Հովիւը ոչ մի տեղից պատասխան չը ստանալով, այլ ևս ոչինչ չը կարողացաւ ասել, սրտնեղած դարձեալ ընկուզենու սևացած կոճղի վերայ նստեց և ինչպէս մի հոուատես, տխուր տրտում, գլուխը ձեռքերի մէջ առած, չէր իմանում ինչ անէր. իսկ ոչխարները՝ իրանց յիշողութեան մէջ նորոգելով վիթխարի ընկուզենու ստուերը՝ մոլորուած, սրտները կոտրուած էլ չ՝իմացան ինչպէս այստեղ այնտեղ նստոտեցին և տխուր աչքերը բաց ու խուփ անելով որոճում՝ էին։ Ցանկարծ հովիւի յուսահատ աչքերը կանգ առին ընկուզենու չորացած, այրուած արմատների վերայ, մի ակնթարթում փոխուեց, տեղից վեր ցատկեց և սկսեց տնտղել արմատների միջից երևացող նոր դուրս եկած մի ընձիւղ, որի թերթիկները՝ թէև դեղնած, թառամած, բայց մէջը կենդանի շունչ կար մի մազից կախուած. բաւական էր արևը իւր այրող ճառագայթների ոյժը ցոյց տար, նա էլ—ընկուզենու վերջին շառաւիղը՝ ճնուս բարև կասէր աշխարհին. այլ ևս ոչ

մի հետք, ոչ մի յիշատակ չէր մնալ վիթխարի ընկուզենուց։ Հովիւը ձեռքով շշափեց այդ միահատիկ կիսակենդան շառաւիղը, ուրախութեամբ փայլեցին աչքերը. նա մտածում էր. «Ումնի՞ց առնեմ վրէժս և ի՞նչ օգուտ, արդեօ՞ք սորանով մի օգուտ տուած կը լինիմ իմ սիրելի բարեկամի աճիւնին. ո՛չ, ի զուրէ այդ բոլորը, ահա՛, ահա՛ իմ սիրելի ընկուզենու միահատիկ ժառանգը, թէև կիսակենդան, բայց ես յոյս ունիմ, որ կարող եմ իմ անդադրում խնամքով կենդանացնել. և ինչ կարծիք, որ ժամանակին կունենամ մի այնպիսի ընկուզենի, ինչպէս իմ հին բարեկամն էր։ Ցաւել, լաց լինել հին ընկուզենու վրայ, որ նա կորաւ, մեռաւ՝ դա թուլամորթների գործն է, իսկ ինձպէս մարդիկ, որոնք դեռ ևս իրանց մէջ ոյժ են զգում, ոչ թէ միայն թշնամուն տապալել, որը մեծ բան չէ, այլ տապալածի տեղը նորը կանգնացնել, ահա որն է մեծ գործը, ամօթ է լաց ու կոծ անել և վրէ՛ժ, վրէ՛ժ գոռալով ամբողջ կեանքը անցկացնել»։

Եւ հովիւը ոգևորուած այս նոր մտքով իսկոյն և եթ գործին ձեռք զարկեց. նա սկսեց այդ ճիւղի տակը փորել, բոլորովին չորացած անպէտք թերթիկները պոկել, վրայի երևացող շէկ մրջիւնները, ստորաքարշ սողացող ճիճուները ոտի տակ տրորել, ոչնչացնել. այսպէս երբ բոլորովին ազատեց իւր հին բարեկամի մի հատիկ որդուն իւր մօտ գտնուած թշնամիներից, այժմ էլ մտածեց անյագ կենդանիների բերանից և վայրենի գազանների աւերից ոտերից ազատել,— նա ամուր ցանկով պատեց չորս կողմը. յետոյ գնաց մօտիկ աղբիւրից ջուր բերաւ աղբիւրից։ Նա դորանով էլ չը բաւականացաւ, որպէսզի միշտ ջուր լինի նոր ընկուզենու տակը, որ աւելի շուտ զարդանայ, ոտտեր արձակի,—աղբիւրից առու հանեց մինչև ընկուզենին։

Հովիւը ուրախ էր, - իւր նպատակին հասաւ. նա ամեն օր դալիս էր իւր հօտով նոր ընկուզենու մօտ նստում և ամեն անգամ երբ տեսնում էր նոր տերև գցած, իսկ հին կիսաժեռ տերևները զարթացած՝ հրճւում, ցնծում էր և, սրինգը հանելով, անուշ կերպով նւագում. նա իւր սրինգի ձայնով ոչ թէ օրօր էր կարդում իւր սիրասուն գաւակին, այլ քաջալերութիւն, խոր քնից զարթնել, աճել, ոտտեր արձակել, կատարը ամպերին հասցնել և իւր սիրած անթիւ անհամար ընկոյզներով բեռնաւորել։